

3435, 3436  
3437, 3438  
3439

281  

---

6-71 1911

21

2018

82001

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ

ԼԵՒՈՆ ՄԿՐՏԻԶԵԱՆ

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ՄԱՍՆ Ա.

ԾՆՈԳՔ ԵՒ ԶԱՒԱԿՈՒՆՔ

معارف نظارت جلیله سینک ۱۲۸۷ نومرولی رخصتنامه سیله طبع اولمشدر



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏԳԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐՍԷՍ Ճ. ԱՐԱՄԵԱՆ  
Զամագրրար Յակոբեան Խան

1893

ԳԻՆ 5 ՂՐՇ.


ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՎԱՀԱՆ Գ. ԶԱՐԴԱՐԵԱՆԻ

347.3

ԼԵՒՈՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ


ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ՄԱՍՆ Ա.



ԾՆՈՂՔ ԵՒ ԶԱԻԱԿՈՒՆՔ

معارف نظارت جليله سنك رخصتيله طبع اولمشدر



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏԳԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐՍԷՍ Ճ. ԱՐԱՄԵԱՆ

Զաժճագերլար Յակոբեան Խան

1893

11045

11045

11045

10066-57

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Սոյն տեսակին մէջ կը պատկանուին երկս-  
սարդաց ամուսնական իրաւունքներն: Օրիորդաց  
ամուսնական իրաւանց մասին պիտի խօսինք յաջորդ  
տեսքին մէջ զոր ընդ փոյթ պիտի հրատարակեմք եթէ  
սոյն տեսքն փաշալերութիւն գտնէ:

Բ. Վ. Գ. Զ.

# ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԾՆՈՂՔ ԵՒ ԶԱՒԱԿՈՒՆՔ

Մ Ա Ս Ն Ա .

Արեւելեան ազգաց մէջ, նախապատմական ժամանակներէ կ'սկսի այն սովորութիւնը՝ որուն համեմատ երիտասարդք, իրենց ամուսնութեան առթիւ, ծնողաց հաւանութեան կը դիմեն. ասիկայ նահապետական բարքերու մէկ մնացորդն է, որ արդէն շատ լուսաւորեալ ազգերու մէջ իր նախկին խտութենէն բաւական բան կորուսած է, եւ հաւանական է որ, ժամանակի ընթացքին մէջ, քաղաքակրթութեան առաջադիմութեանն ու նրբութեանցն համեմատ, հետզհետէ աւելի տկարանայ:

Յայտնի է թէ հին բարի ժամանակները, ընտանիքի մը ամբողջ մտաւոր ազգականները միեւնոյն յարկին մէջ կը բնակէին. ծերունազարդ հօր բոլոր զաւակներն, մանչ թէ աղջիկ, հարսերն ու փեսաները, թոռներն, թոռան զակներն, իր կրտսեր եղբայրները, անոնց կիներն ու զաւրներն, վերջապէս յիսուն վաթսուն հոգիի բազմութիւն մը միեւնոյն սեղանը կը բոլորէր եւ նոյն տանիքին ներքեւ կը ննջէր. ասոնց մէջ ամենէն տարւոքն՝ այդ ընտանիքի նահապետն էր. ընտանիքի բոլոր միւս անդամք իրեն զաւակները կը նկատուէին. ինքն միայն կը հրամայէր եւ միւսները ամենայն երկիւղածութեամբ կը հնազանդէին. այս կերպով կենցաղավարութիւնը կը կոչուէր՝ նահապետական կեանք. իրաւ է թէ նահապետական դրութիւնը անտեսական տեսակէտով իր առաւելութիւնը ունէր, բայց միւս կողմանէ մեծամեծ անպատեհութիւններէ ալ ազատ չէր, որոց ա-

ուսմանն էր՝ անհատական իրաւունքի անտեսութիւնը՝ ընտանիքի պետին կողմանէ . եւ առանց երկար բարակ մըտածելու, կրնանք վճռել թէ այդ կեանքի քայքայումը իր մեծագոյն դատաւարտութիւնն է, որովհետեւ մեր անհատի կեանքին մէջ՝ ամեն ատեն, իսկ հանրային կեանքի մէջ՝ ընդհանրապէս, ինչ մեծ փոփոխութիւն որ տեղի կունենայ՝ բարեփոխում մը, ցանկալի առաջդիմութիւն մըն է :

Նահագնատական կենցաղավարութեան փճանալովը, ծընողաց իշխանութիւնը շատ սահմանափակուեցաւ եւ ասոր փոխարէն, զաւակաց անհատական իրաւունքը օրինապէս ճանչցուեցաւ . բայց որովհետեւ իրաւունք մը վայելելը՝ վայելողին ձեռնհասութիւնը կ'ենթադրէ՝ ասոր համար, քաղաքային իշխանութիւնը հասի չհասի օրէնքները սահմանեցին . մինչեւ որոշեալ տարիք մը, որ զանազան երկիրներու համեմատ պզտիկ փոփոխութիւններու ենթակայ է, անչափահասութեան շրջան նկատուեցաւ . այս շրջանի բոլոր տեւողութեան միջոցին կ'ենթադրուի թէ տղան անկարող է կատարելապէս որոշելու իր օգուտն ու վնասը, ուստի եւ ազատութիւն չունի իր գործերը ինքը անկախօրէն տընորինելու . այս պատճառաւ իր իրաւունքները սոժամապէս փոխ կուտայ անոր՝ որ իրմէ աւելի խելացի է ու փորձառու, եւ միանգամայն կը հնազանդի այդ իրմէ իմաստնագունին իշխանութեանը՝ զոր, ինչպէս ըսինք, օրէնքը նուիրագործած է . բայց երբ տղան չափահասութեան տարիքը թեւակոխէ՝ ետ կ'առնէ իր խնամակալէն բոլոր այն իրաւունքները՝ զորս անչափահասութեան միջոցին փոխ տընուած էր անոր . ալ անկէ ետքը, չափահաս տղան օրէնքով պարտաւորուած չէ իր խնամակալին հնազանդելու, բայց իբր մարդ, բարոյական պարտաւորութիւն մը ունի խորին յարգանք տածելու անոր նկատմամբ՝ որ այնչափ երկար տարիներ իրեն համար յոգնած է . եւ իրեն բարիք կամեցած . այդ յարգանքը՝ փոխադարձ օգնութիւն եւ բարիք կամենալու կը զրդէ զինքը դէպի իր խնամակալը . մինչեւ իսկ երբեմն զօհողութիւններ ալ յանձն կ'առնու, այսինքն

կաւովիս իր իրաւունքէն մասամբ կը հրաժարի, սակայն կը կրկնենք, օրէնքը չի բռնադատեր զինքը այդպէս վարուելու, հասարակ իր ազատ կամքէն կախում ունի . ուստի կը հասկցուի որ, տղուն չափահասութենէն յետոյ, խնամակալին բոլոր օրինական իրաւունքները կը դադրին տղուն վերայէն . աւելցնենք թէ, եւ բնական եւ քաղաքական օրէնքները ամենակատարեալ համաձայնութեամբ, անչափահաս տղուն խնամակալ ընդունած են՝ անոր ծնողքը :

Թէ որ ծնողք այս պարզ ճշմարտութիւնները ամեն տեղ եւ ամեն ատեն ըմբռնէին՝ մենք հիմա պէտք չալիտի ունենայինք այս տետրակը խմբագրելու :

Լսած եմ թէ Եւրոպիոյ քանի մը երկիրներուն մէջ, մեր այս բացատրած օրէնքը շատ լաւ հասկցուած է . զաւակաց հայրը մինչեւ իրենց չափահասութեան տարիքը ամէն խրնամբ եւ ամեն պաշտպանութիւն կը շտայլէ . բայց երբ տըղան անչափահասութեան շրջանը բողբոյ՝ հայրը նոյն հետայն ամէն օգնութիւն կը դադարեցնէ ինչպէս նաեւ նոյն վայրկեանէն իր իշխանութիւնը կը կորսուեցնէ անոր վրայէն :

Տղան այն օրէն ընտանեկան յարկը թողլով՝ կ'երթայ այլուր բնակիլ, կամ եթէ ուզէ միեւնոյն յարկին մէջ մնալ՝ պարտի իր սնունդին եւ տան վարձքին համար վճարել . հայրը այլեւս անոր գործերուն բնաւ չի միջամտեր, ուրիշ խնդիր է որ երբ զաւակը իրեն խորհուրդին դիմելու ըլլայ՝ զայն ձեռնունայն չի դարցնէր . բայց նիւթական օգնութիւն — երբէք :

Իրաց այս վիճակին մէջ անկարելի է որ հօր եւ որդւոյ մէջ զժտութիւն ծագի . ամէն մէկը կը գործէ իր հասկըցած եղանակովը . չափահասութենէ վերջ, ծնողաց ու զաւակաց միջեւ հասարակաց բան չի մնար այլ եւս . միայն, ինչպէս ըսինք, որդին, ի հօրկէ պարտաճանաչ որդիին կ'ակնարկենք, ամենախորին յարգանք եւ երախտադիտութիւն կունենայ դէպի իր ծնողքը :

Գժբաղդտբար, այդ բարեբաստիկ Եւրոպացիներէն շատ ետք մնացած ըլլալով, շատ աղէկ ըմբռնած չենք թէ

ուր կ'սկսի իրաւունքնիս եւ ո՛ւր կը վերջանայ. ասոր համար է որ զիրար չհասկնալով, պարտքերնիս եւ իրաւունքնիս չճանչնալով, յաճախ ընտանեկան յարկերնուս անդորրութիւնը կը վրդովենք եւ այս կերպով ընկերական մեծագոյն ձախողութեաներն ու դժբաղդութիւնները ձեռքովնիս կը պատրաստենք :

Ընտանեկան յարկերու խաղաղութիւնը վրդովող պարագաներէն մին՝ ծնողաց ու զաւակաց միջեւ տեղի ունեցած անհամաձայնութիւնն է, այս վերջնոց ամուսնութեան առթիւ :

Ինչպէս տետրակիս սկիզբը յիշեցինք, նահապետական բարքերու մէկ մնացորդն է մեր մէջ, զաւակաց ամուսնութեան առթիւ ծնողական հաւանութեան դիմելը. քաղաքային օրինօք, չափահաս զաւակը պարտաւորութիւն չունի այդ հաւանութիւնն անպատճառ ընդունելու. բայց որովհետեւ ամենուրեք տգէտ ծնողք մեծամասնութիւն կը կազմեն, եւ քանի որ տգէտ մը չէ կարող զգալ եւ գիտնալ բնական ու քաղաքական օրէնքի այս բացորոշ տրամադրութիւնները, ամէն անգամ որ զաւակ մը առանց իր ծնողաց հրամանին ամուսնանալու եղնէ՝ կը նկատուի ըմբոստ, սպերախտ. եւ այս պարագային մէջ, ծնողք իրական, անդարմանելի ցաւ մը կ'զգան. միւս կողմանէ, զաւակ մը իւր հայրն ու մայրը ո՛յնչափ խորունկ կը սիրէ որ, գիտնալով հանդերձ թէ ամուսնանալու համար օրինօք պարտաւորուած չէ անոնց հաւանութիւնն առնել, չուզեր պարագ տեղը, լոկ սկզբունքի մը համար, անոնց վիշտ պատճառել, անոնց խաբրը կտորել. ուստի, չնչին բացառութիւններով, երիտասարդները, միշտ դիմած են, իրենց ամուսնութեան առթիւ, ծնողական հաւանութեան :

Բայց արի՛ տե՛ս որ զաւակաց այս բարի կամեցողութիւնը ծնողք շատ անգամ չարաչար կը գործածեն եւ իրենց ձեռքով զաւակնին կը գրգռեն ըմբոստութեան, եւ որ աւելին է, երբեմն խսկ անոնց դժբաղդութեան կ'ըլլան պատճառ :

Ծնողք միտքերնին դրած են որ իրենց տղուն աղջկը ձեռքովնին գտնեն. եթէ իրենց ընտրութիւնը զաւակնուն ճաշակին յարմար գայ՝ ամէն ինչ լաւ կ'ընթանայ, կուրի տեղի չի մնար. բայց երբ ընտրութեան նախաձեռնութիւնը զաւակն ինք ունենայ, ու այդ ընտրութիւն իր ծնողաց յարմար չի թուի՝ (եւ ասոր ընաւ տարակոյս մի ունենաք, զի այս պարագային մէջ կ'ենթադրուի թէ միշտ բոսսալ մը կայ որ տղան կրիտե հաւնած է), ահա կուրը կ'ըսկսի. կուր մը հակասական եւ անխմատ, զաւակին ու ծնողացը միջեւ :

Հիմա քնենք մի առ մի թէ որոնք են ծնողաց դժգոհութեան պատճառները երբ ընտրութիւնը զաւակաց կողմէ կը լինի :

Ս. Գեղեցկութիւն, — Թէպէտ ստոյգ է որ ընդհանուր գեղեցկութիւն մը ( *Beauté générale* ) կայ, զոր ամէն ոք տեսածին պէս կը ճանչնայ ու կը գնահատէ, բայց անկէ զատ եւ անկէ դուրս մասնաւոր հոգեբանական գեղեցկութիւններ ալ կան որոնք ամեն մարդու չեն երեւար կամ ամեն անհատի վրայ հաւասարապէս չեն ներգործեր. բարեձեւ հասակ մը, երկայն մազեր, նազելածեմ քալուածք մը, սիրուն ձեռքեր, հրավառ աչեր, այտերու բանաստեղծական զալուկն, այտերուն վրայ փոսիկներ, հոգեհմայ նայուածք մը, խօսելու ձիրք մը հրապուրիչ, ներդաշնակ ձայն մը, եւ այլ ասոնց նման հարիւրաւոր մանր մունր առաւելութիւններ, զատ զատ առնուած, իրենց գեղեցկութիւնն ունին. եւ երբեմն, ասոնցմէ ամենէն անշանն անգամ աղջկան մը վրայ տեսնուելով կրնայ երիտասարդի մը սիրտը յուզել. ազիկայ երիտասարդին ջղային դրութենէն ու մտաւոր զարգացումն կախում ունի. ասոր համար է որ այս մասին շատ համոզիչ առած մը կայ: Սիրսը գո՛վ որ սիրե՛ւ՝ ա՛յն է գեղեցիկը: Այս առածի ճշմարտութիւնը միայն կարգ մը ծնողք կարող եղած չեն ըմբռնել. ենթադրենք որ երիտասարդը աղջկան մը հաւնեցաւ. այդ բաւական չէ. հայրն ալ պիտի հաւնի, մայրն ալ պիտի հաւնի. թէ որ

մօրաքոյր ունի՝ մօրաքոյրն ալ. հօրաքոյր՝ հօրաքոյրն ալ. այն, ամենքն ալ պիտի հաւնին. տնով տեղով ազջիկտես պիտի երթան. եւ թէ որ չի հաւնին՝ այն ազջիկը չ'ըլլար. արտերկին չի փակար. բայց տղան հաւնած, թերեւս իսկ սիրահարած է. որո՞ւ հոգ, ուրիշ ազջիկ չատ...:

Բ. Տարիք, — Երկու սեուերու միջեւ եղած կազմային տարբերութեան պատճառով կինը էրիկմարդէն շուտ կը թառամի. այս է պատճառը որ իւր ամուսնէն քանի մը տարու պզտիկ կինը նախընտրելի է, եւ ասիկա շատ խորարմատ տարւորութիւն ձգած է մարդոց մէջ. բայց սեպենք թէ երիտասարդ մը իրեն տարեկից կամ իրմէ քանի մը տարու մեծ օրիտոզի մը համակրեցաւ. տարիքի տարբերութիւնը զօրաւոր արգելք մը չէ որ անոր հետ չի կարենայ ամուսնանալ. մանաւանդ այնպիսի երիտասարդի մը համար՝ որ ամուսնութեան մէջ լրի հաճոյք կամ հեշտութիւն չի փնտեր. հոս նորէն ծնողաց կողմէ ընդդիմութիւն: Մեղայ, ի՞նչ ըսե՛ր ե, ուր շտաւ թաւ ե որ մարդ կրայ մօրը տեղը աղջկան հետ կարգուի: Բայց, Տիկին, կը մտնաք թէ ձեր զաւակն է որ պիտի ամուսնանայ եւ ոչ թէ դուք, ու ձեր զաւակը կը հաւանի այդ ամուսնութեան. օգուտ չընէր, արամարանութիւնդ որո՞ւ կը ծախես, ազջիկը մենձ է, չըլլար.....:

Գ. Նիւթական վիճակը, — Ամէն ծնողք փառասիրութիւն մ'ունի իր զաւակին հարուստ տեղէ ազջիկ գտնել. բայց կը պատահի որ ազքատիկ ազջիկ մը տղուն սիրտը գրաւէ նորէն ընդդիմութիւն. ինչո՞ւ համար հարուստին զաւակը դրած ի՛հեւ էլլաս ազքատի ազջիկ պիտի աւանտ, դուն ազքատի՞ ըստի ես. տղան թող ի՛զուր համոզէ մայրը թէ իր նիւթական վիճակը տեղն է, իրեն համար տարբերութիւն չընէր հարուստը կամ ազքատը, բաւական է որ իր սիրածն ըլլայ, թէ ինքն այն ազջկան սիրահարած է եւն. — Մեղայ, գեե՛ր աւ աչ նոր եղաւ, մեր վախիթը ակակ սիրահարուի՛ց միրահարուի՛ց չի կար.....:

Դ. — Ազջկան բարոյականը, — Եթէ ծնողք մասնակի

արգարացում մը ունին իրենց ընդդիմութեան համար՝ այն ալ այս վերջին պարագային մէջն է:

Երբեմն զաւակը կ'երթայ այնպիսի ընտրութիւն մը կ'ընէ որ բարոյականի տեսակէտով ո՛չ իրեն՝ ոչ ալ իր ընտանիքին պատիւ կը բերէ. ծնողք այս գործին կը միջամտեն թերեւս բարեսրտութիւնէ չարժեալ. չեն ուզեր որ զաւակին հետ իր բայց այս խնդիրը իր շատ փափուկ կողմն ունի եւ կարօտ է լուրջ ուսումնասիրութեան:

Ինքնամատոյց ազջիկներ կան, որոնք իրենք իսկ իրենց պարկեշտութեան վրայ մեծ համարում չ'ունենալով եւ տեսնելով որ ուղիղ մարդիկ իրենցմէ հեռու կը փախչին՝ բան գործ ըրած են ֆիզիզական հրապոյններով մարդ որաւ. կարգ մը երիտասարդներ ալ, գուցէ իսկգրան պարզ ըզրօտանքի համար, անոնց հաճոյ թուելու ձեւեր կ'առնեն. յարբերութիւնները տակաւ առ տակաւ կը մտերմանան, մինչեւ որ երիտասարդը օր մը կը տեսնէ որ իր սիրտը անըզգայութենէ ելած է, մանաւանդ թէ ուժգին կը բարախէ զրօսանքի առարկայ եղող ազջկանն համար. սպարզ ժամանց նկատուած զրօսանքին յաջորդող բուռն սէրն, սէր մը սրուն յաճախ անարժան է խնդրոյն առարկայ եղող ազջիկը, արդարեւ ցաւալի հետեւանք մըն է. բայց հետեւանք մը՝ զոր միայն շատ կանուխէն կարելի էր արգիլել. որովհետեւ, այդ վիճակին ենթակայ եղող երիտասարդին աչքին՝ ալ այնուհետեւ ո՛չ ընկերական դիրք կ'երեւայ, ո՛չ պատիւ, ո՛չ ընտանեկան բարոյական. ասոնք ամենքն ալ իր մոլորեալ աչերուն երկրորդական, ինչ կըսեմ, բնաւ նշանակութիւն չունին. ալ յիմար մըն է նա, սիրոյ յիմարը: Տղան դեռ այս վիճակին չի հասած, ծնողք շատ անգամ տեղեակ են անոր յարբերութիւններուն, բայց չի տեսնելու կը պարենն. եւ յետոյ, երբոր վճռական ժամը կուգայ՝ ծայրայեղ ընդդիմութիւն. աւելի ազէկ չէ՞ր որ ժամանակին, դեռ յարբերութեանց նոր սկսած ատենը, երիտասարդը ըզգուշացնէին այն անդունդէն՝ սրուն հեռուցեալ կը մտանար եւ ուր, օր մը, ապահովապէս պիտի գահավիժէր:

Քայց գուցէ ծնողք ժամանակին չիմացան , կամ տղանին իրենց խորհուրդներուն չանսաց . այն ատեն ինչ պէտք է ընել . կարծեմ թէ կատարեալ իրողութեան առջեւ յամառիլը մեծագոյն խոհեմութիւնը չէ . գործը այն վիճակին եկած հասած է որ , ալ այնուհետեւ ամենէն զօրաւոր ընդդիմութիւնները տղուն երկաթեայ կամքին զարնուելով կը խորտակուին , կը փշուրին . տղան արտաքսել , յետ այնօրիկ բնաւ երեսը չի նայել . ինչ կուզէ թո՛ղ ըլլայ , անօթի մնայ , ծարաւ մնայ , իրենց ինչո՛ւն պէտք . բայց եթէ տղան գործած է այնպիսի յանցանք մը որ ամբողջ ընտանիքին պատիւը կ'արատաւորէ՝ տունէն արտաքսուելովը , երեսի վրայ թողուելովը այդ արատը չի մաքրուիր . արատը կայ ու կը մնայ . խելացութիւնը կը պահանջէ գոնէ երկու չարիքին փոքրագոյնը ընտրել . այս մասին իմ կարծիքըս հետեւեալն է :

Եթէ ստոյգ է որ միջավայրը ազդեցութիւն ունի մարդու բարոյականին վրայ՝ եթէ ստոյգ է որ բարի մարդ մը երկար ժամանակ գէշերու ընկերութեան մէջ ապրելով ինքքն ալ բան մը կորստնցունէ իր բարութենէն՝ ուրեմն ըստոյգ է նաեւ որ չար մարդն ալ բարիներու երկարամտայ ընկերակցութիւնը վայելելով՝ ժամանակի ընթացքին մէջ , կամաց կամաց կը բարեփոխուի :

Արդ , կը հարցնեմ , ո՞րն աւելի խելացութիւն է . թո՛ղ տալ որ տղան երթայ խառնուի այն անպարկեշտ միջավայրին ուրկէ ընտրած է իր կինը եւ ինքն ալ քիչ ատենէն շուրջը գտնուողներուն բարոյական անկումէն ներգործուի , թէ ո՞չ քաշել հանել այդ անհաճոյ հարսը աղտեղութեան մէջէն եւ անոր մաքուր մթնոլորտ մը շնչել տալ . զանի այնպիսի միջավայրի մը մէջ գնել՝ որ իր շուրջը միայն բարոյական մաքրութիւն , պարկեշտութիւն եւ առաքինութիւն տեսնէ . ինձ կը թուի թէ այս վերջին միջոցը նախընտրելի է երկու տեսակէտով . նախ որ անառակ որդիս բարոյական ապագայ անկումէ մը պիտի փրկուի , եւ երկրորդ , անշնորհք հարսը ժամանակի ընթացքին մէջ թեր-

եւս կատարելապէս՝ բայց ապահովապէս գոնէ քիչ մը պիտի բարեփոխուի :

Ծնողք , սակայն , այնպիսի պարագաներու մէջ խոհեմութենէն աւելի ուրիշ ճայնի մը կը հետեւին — վրէժխնդրութեան ճայնին — Քանի որ այս ապուրը կերաւ թո՛ղ հիմայ երթայ սովրի — Արդարացի՞ է սոյն զգացումն . այս հարցման պատասխանելու համար պէտք է քննել անառակ որդիին անցեալը : Թէպէտ ասանկ փախուկ խնդիրներու վրայ վճռապէս խօսիլ չըլլար՝ բոց կը կարծեմ թէ , տղուն անչափահասութեան խնամակալները , այսինքն ծնողքքն , երբ լիովին պարտականութիւններն կատարած ըլլային իրենց զաւկին նկատմամբ , այսինքն երբ օժտէին զինքն այնպիսի կրթութեամբ մը որ չափահաս լինելէ յետոյ կարող ըլլար անխտոր ընթանալ կենաց ճամբուն մէջ՝ այն ժամանակ այդ տղան զերծ պիտի ըլլար այն կարգ մը թեթեւութիւններէն որոց հետեւանօք եկած ինկած է ենթադրեալ անել վիճակին մէջ . եւ քանի որ ծընողք մինչեւ մէկ աստիճան պատասխանատու են իրենց զաւկին անառակութեան՝ ուրեմն ինչ տրամաբանութեամբ այնչափ աններող կը գտնուին իրենց զաւկին նկատմամբ :

Ինչ որ ալ ըլլայ , թեպէտ տեսականին նայելով , ծնողք այս վերջին պարագային մէջ ալ բողբոլին անիրաւ են՝ եւ սակայն խնդիրը վիճարանութեան առարկայ կրնայ ըլլալ , եւ կարծիքները կրնան այս մասին տարբերիլ : Սակայն , այս քիչ շատ արդարանալի ընդդիմութեանն զատ՝ ծնողական ուրիշ ամեն ընդդիմութիւն անիրաւութեան դրոշմով միայն կրնամք մկրտել :

Եւ այս զանազան կարգի ընդդիմութիւնները կրնան այնքան զարգանալ որ ծնողական գուժի անապառ ըզգացումն անգամ կը խեղդեն իրենց մէջ . այո , այն մայրը որ բոցերու մէջը պիտի նետուէր իր որդին հրդեհին ճիրաններէն փրկելու համար , մայրն , որ առիւծին առջեւ պիտի դիմադրուէր՝ մանկիկը անոր արիւնաբոս բերնին կեր չընելու համար՝ այդ միեւնոյն մայրը անապրբեր կրնայ դի-

տել իր սրտի հատորին տառապանքը եւ մինչեւ իսկ մահը :  
Յիշողութիւնս կը թեւադրէ ինձ երկու օրինակներ, որոցմով պիտի փակեմ սոյն անդրանիկ տետրակս :

Քաղաքի մը արուարձաններէն միոյն մէջ կ'ապրէր բարեկեցիկ ընտանիք մը, որոյ անդամոց մին, տասն եւ ութն տարեկան վայելուչ երիտասարդ մը, շատ սիրուն գտած էր իր դրացուհի օրիորդը. ընտանեկան փոխադարձ յարաբերութիւններ՝ մտերմութեան կապ մը հաստատած էին երիտասարդին ու երիտասարդուհոյն միջեւ, որ յետոյ անըզգալաբար բուռն սիրոյ մը փոխուած էր. տղուն մայրը, կանացի սրատեսութեամբ, ժամանակին զգացած էր զայս, բայց, գուցէ կարեւորութենէ զուրկ համարելով եւ, մէ իսկ խօսք մը ուղղած էր այս մասին իր որդւոյն. երկու սիրահարները, լուսնկայի գեղեցիկ գիշեր մը, երդուընցած էին իրենց հուսի յետին շունչը հաւատարիմ մնալ իրարու. կարելի չէ նկարագրել թէ ինչ անհուն ցաւ զգաց երիտասարդը այն օրը՝ երբ իմացաւ թէ հարկ էր իրենց բնակած տունը եւ գիւղը փոխել եւ երթալ քաջուիլ ուրիշ հեռաւոր գիւղ մը. գուցէ նախատակ մը կար այս տեղափոխութեան մէջ. գուցէ այս կերպով սիրոյ կրակը պահեցընել կուզէին. բայց ճշմարիտ սէրը, այն՝ որ ամենուրեք այնչափ հաղուազիւտ է, ասանկ խոչնդոտներու առջեւ չ'ընկրկիր. անդոյ հեռաւորութիւնը չի կրցաւ սեւ է կերպով նուազեցնել փոխադարձ սէրը. քանի քանիներ, համբաւաւոր իրենց ընկերական դիրքովը, եկան օրիորդին ձեռքը խնդրել. միշտ նոյն պատասխանը — չպիտի աւուրսնանար. մը եւ նոյն ատեն ինչ գեղանի եւ հարուստ օրիորդներ չպիտի փափաղէին մեր երիտասարդը իրենց սրտին գերի ընել. բայց նա միայն մէկ մտածում ունէր ու միակ արարածի մը համար կ'ապրէր. կարծես նախազգացում մ'ունէր թէ ծնողքը իր առաջարկը պիտի մերժէին, ուստի այս մտտին բնաւ խօսք չի բացաւ անոնց՝ մինչեւ որ նիւթական վիճակը չ'ապահովեց. նիւթականն ապահովելով կ'երազէր գոնէ քիչ շատ հեզինակութիւն ունենալ այնպիսի խնդրոյ մը մէջ.

որչնի կը սխալէր խեղճ տղան. այն օրը որ սրտին գաղտնիքը հաղորդեց իր ծնողաց՝ հայրը, միամիտ ծերուկ մը, աւարկութիւն չունէր. բայց մայրը՝ լացաւ, կոծեց, մաղեցրը փետեց. չէ ան աղջիկը չ'ըլլար. պատճառը — շատ պարզ : Օրիորդը երեք տարու մեծ էր իր տղէն, լուսած բան էր այս, ելլալ կարգուիլ մօրը տեղը աղջկան մը հետ . . . :

Խեղճ տղան ծայրայեղ կերպով երկիւղած, չէր համարձակեր մայրական սպառնալիքին դիմադրելու. այլ լռիկ մնջիկ իր վիշտը կը սեղմէր սրտին մէջ՝ լաւագոյն օրերու սպասելով. օրեր որք աւագ բնաւ չի հասան. տղուն բարոյական տառապանքները, որոնք այլ եւս գաղտնիք մը չէին եւ ս'է մէկի համար, չի կրցին սակայն մօրն ուշագրութեանը արժանանալ. այդ սասնասրտութիւնը տարօրինակ կերպով անգութ շեշտ մը ունէր իր մէջ եւ ամենէն անտարբեր սրտերը կը զայրացնէր. բայց եւ այնպէս, իրիկուն մը, հեզ ու խոնարհ այն երիտասարդը տուն վերագարցաւ մղորեալ աչքերով, շփոթած, ցնորած. մայրը իր որդին այդ վիճակին մէջ տեսնելով այլ յայլմէ կ'ըլլայ, իրար կ'անցնի — դաւակ, ինչ եղաւ դաւակ, պիտի պիտի մտխիւր կտրեր է — եւ իրօք մեռել է մը աւելի տոգոյն սրտին յուզմունքէն, նեղութենէն, ակուսները իրարու կը զարնուէին եւ չէր կարող խօսիլ. վերջապէս, վերջին ճիգով մը բոլոր ոյժը ամբողջելով այսպէս դուրս պուզկաց «Այսչափ ատեն համբերեցի, մայր, ալ անկարելի է, չեմ կրնար. կամ հրաման պիտի տաս որ այն աղջիկը առնեմ, կամ վազը որդիդ ձուկերուն կեր պիտի ըլլայ : » Հեզ որդիին այս յանկարծական փոփոխութիւնը կայծակի ազդեցութիւնը ըրաւ մօրը վրայ. խեղճ տղուն նայուածքը յուսահատօրէն սարսափելի էր եւ ձայնը՝ իր մէջ կատաղի շեշտ մը կը կրէր որ կրնար ամենէն պաղարիւն սրտերը գունդ հանել. մայրը ինքն ալ ահաբեկեցաւ եւ «դաւակ ձեռքէս պիտի ելլայ » ըսելով, աչերը արտասուօք լի տուաւ վերջապէս խնդրուած հրամանը. քանի մը շաբաթէն հարսանեաց հանդէսը տեղի կունենար. եւ երբ քահանայն սոյն

զոյգ մը ամուսնեը իրարու կը միացնէր՝ արդէն երիտա-  
սարգը ֆառաստուն տարեկան էր եւ օրիորդը ֆառաստուն  
երեմօ՛ւնք ալ այնուհետեւ աւելի իբր քոյր ու եղբայր կենակ-  
ցեցան իրարու հետ. իսկ տղուն մայրը՝ տարի մը յետոյ  
մեռաւ . . . . սրտին ցաւէն :

Ուրիշ երիտասարդ մը կը ճանչնայի, որ իր խանութին  
դիմացի տունէն աղջիկ մը կը սիրէր, աղւոր պարկեշտ,  
բայց աղքատ. երիտասարդն ալ հարուստ մը չէր եւ զո՛ն  
իր համեստ վիճակէն կը փափաքէր կեանքի ծանր բեռը  
բաժնել այն պաշտելի աղջկան հետ. բայց մայրը դէմ կե-  
ցաւ — ինչ պիտի ընես այն աղքատիկը առնես, էս քեզի  
փարալը աղջիկ պիտի դռնամ » . Տղան, համեստունակ,  
խոնարհ արարած մը, զո՛ւր քանի մը սրտաշարժ խօսքեր  
համարձակեցաւ թոթովել իր սրտին վիճակը մօրը հասկը-  
ցընելու համար. երկու տարի շարունակ երիտասարդին  
դիմումները անօգուտ եղան, մինչեւ որ աղջկանը ուրիշ  
խըրակեր մը ելաւ. ալ այնուհետեւ տղուն վիճակը փոխուե-  
ցաւ. տրտում տխուր կ'անցունէր ամբողջ օրեր. ակորժակ  
չունէր, օրէ օր կը նիհարնար, բարեկամներ գինքը տես-  
նելով իրարու ականջի բան մը կը բարսային չարաչտուկ-  
տղուն այս վիճակին մէջ՝ մայրը անգամ մը ըսած էր, « թող  
մեռնի տէ, ան աղջիկը չ'առնէ » : Տարի մը եւս, եւ տղան  
սեւ հողը գրին. եւ մայրը անոր դագաղին վրայ իյնալով  
կուրար կը պոռար « վախ ետպրում, վախ դաւակա, ան ջըլ-  
թիկին խուրպան գացիր » . . . . :

Եւ մտածել թէ քանիներ կան այսպէս զոհուած . . . . :

ԳՐԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՆՈՑ


Վ. Գ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

ՊՈԼԻՍ, ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԱՄ ՓՈՂՈՑ. ԹԻԻ 12



Կը վաճառուին ամէն տեսակ բույր, տեսակ,  
դպրոցական, վաճառականական պիտոյք եւ գրեան  
ամէն լեզուէ:

Պատրաստութիւնք տպագրական գործոց:  
Լաւ ապրանք, չափաւոր գին:



ԸՆԴ ՄԱՄԼՈՎ




ԼԵՒՈՆ ՄԿՐՏԻԶԵԱՆ

ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ Բ. ՄԱՍ

Գին 50 Փարսոյ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Վ. Գ. ԶԱՐԴԱՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ

ԼԵՒՈՆ ՄԿՐՏԻԶԵԱՆ



ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ՄԱՍՆ Բ.



ԵՄԽՈՒ ԱՊՐԱՆՔ

معارف نظارت جليله سنك رخصتياه طبع اولتمشدر



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐՈՒՅ Ճ. ԱՐԱՄԵԱՆ  
Զամազեղար Յակոբեան Խան

1893

3435, 3436  
3437, 3438  
3439

~~3435~~  
~~3436~~  
~~3437~~  
~~3438~~  
~~3439~~

<< Ազգային գրադարան  
  
NL0030365

<< Ազգային գրադարան  
  
NL0030364

<< Ազգային գրադարան  
  
NL0030363

<< Ազգային գրադարան  
  
NL0030362

<< Ազգային գրադարան  
  
NL0030361

~~3435~~  
~~3436~~  
~~3437~~  
~~3438~~  
~~3439~~

